

բոււնք, իբրև ընդհանուր կանոն: Սակայն ինչպէս արդէն ըսուեցաւ, պաշտօնական և ստիպողական պարագաներու տակ ալ, խոնձութիւն է կարծեմ, ըլլալ նուազ խտապահանջ: Պատահած է որ բժիշկը ինքզինքը փորձանքի մէջ ձգած է առանց յետին միտքի, ընկերութեան մէջ յայտնութիւն մը ընելով ա՛յս կամ ա՛յն հիւանդին նկատմամբ: Իր խօսքերը փոխուած կամ չարափոխուած են և բժիշկը դատապարտուած է չարախօսութեան ամբաստանութեամբ: Պատահած է նոյն իսկ որ հիւանդին մէկ ազգականը, և մօտիկ ուղականը՝ «խօսքը մէջերնիս» ըսելով բժիշկէն տեղեկութիւններ ուղած է հիւանդութեան մասին. յետոյ «ճոխացեալ և յաւելեալ» ասդին անդին ցանցնած է այդ գաղտնիքը և բժիշկը եղած է գէշ մարդ: Այսպիսի պարագաներու մէջ, ամէնէն ապահով ճամբան է հաւատարիմ մնալ բժշկական գաղտնապահութեան սկզբունքին: Եւ ժողովուրդն ալ թո՛ղ սորվի թէ բժիշկը մուսնետիկ չէ՛:

Յէֆրան

ԲԺ. ՅՈՎՍ. ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԿԵՂԾՄԱԶԿԻՆ ԴԷՄ



Ապրիլ 22-29, կեղծմաշկի (գուշ-պօղան, *diphtherie*) դէմ պայքարի եւ պատուաստումի Շաբաթ յայտարարուեցաւ Ֆրանսայի մէջ, Առողջ. նախարարութեան կողմէ, ժողովուրդին ծանօթացնելու համար այդ ահաւոր հիւանդութեան վտանգները եւ պատուաստումի բարիքները: Մինչեւ 1894 թուականը, կեղծմաշկէ բռնուած երախաներուն 70 առ 100ը կը մեռնէին: Շնորհիւ կեղծմաշկի դէմ շիճուկի (*serum*) գիտին, այժմ հիւանդներէ մեծ մասը կ'ազատի: Երեք տարի առաջ գտնուեցաւ նաեւ այդ հիւանդութեան դէմ պատուաստ մը (*anatozine*), զոր երեք անգամ ներարկելով երախաները կը պատուաստուին եւ այլեւ կեղծմաշկով չեն վարակուիր: Շնորհիւ այդ պատուաստին կարելի պիտի ըլլայ անհետացնել կեղծմաշկը, ինչպէս ծաղկախտը՝ շնորհիւ ծաղիկի պատուաստին: Ուտի, շերմապէս կը յանձնարարենք մեր ընթերցողներուն պատուաստել տալ իրենց զաւակները (2—15 տարեկան) այդ նոր պատուաստով, որ ԲԱՅԱՐԱՎԱԿԱԿՍ ԱՆՎՆԱՍ է: Փարիզի մէջ Կ. Խաչի Բուժարանը կը շարունակէ ձրիաբար պատուաստել ամէն չորեքշաբթի առաւօտ: